ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԱԶԴԱԿՆԵՐԸ (12–13–ՐԴ ԴԴ.)

Մեր թվականության 12–րդ դարը Հայոց պետականության պատմության համար ունի առանձնահատուկ նշանակություն: Այն բնորոշվում է հայերով բնակեցված տարածքների ընդարձակմամբ, Մեծ Հայքի բուն տարածքներից դուրս՝ Կիլիկիայում և այլուր հայկական քաղաքական և մշակույթային նոր կենտրոնների ստեղծումով, Կիլիկիայում եւ Հյուսիսային Ասորիքում հայկական պետական նոր միավորների առաջացումով, որոնք հետզհետե առաջնորդի դեր են ստանձնում ողջ հայաբնակ էկումենեում: Դա մի կարևոր ժամանակահատված է, երբ անշրջելի փոփոխություններ են տեղի ունենում Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական կյանքում, ժողովրդի գիտակցության մեջ, վարչական կառավարման և եկեղեցական կազմակերպությունների կառուցվածքում: Աշխարհագրական նոր միջավայրերում (Հյուսիսային Ասորիք, Կիլիկիա, Եգիպտոս, Պաղեստին, Բալկաններ, Իտալիա) առաջանում են հայկական բնակավայրեր և տարերայնորեն ստեղծվում է հայկական սփյուռքի նախատիպը, իրեն հատուկ հոգևոր ու մշակութային անկրկնելի օջախներով ու եկեղեցաթեմական կառուցվածքներով: Այս փոփոխությունները պայմանավորված էին Հայաստանի հիմնական՝ նախարարական զինվորական ուժի բուն Հայաստանի քաղաքական կենտրոններից դուրս բերումով, որն հետևանք էր Բյուզանդական կայսրության կողմից Մեծ Հայքի տարածքների բռնագրավման և Բագրատունյաց թագավորության կործանման:

11-րդ դարի ընթացքում Մերձավոր Արևելքում տեղի էին ունենում արմատական փոփոխություններ, հիմնավոր վերափոխման էր ենթարկվում տարածաշրջանի թե՛ քաղաքական, թե՛ էթնիկ քարտեզը: Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության հետևանքով 12–րդ դարի առաջին կեսին Հայաստանը կրկին կորցնում է անկախությունը, հայկական մի շարք թագավորություններ և իշխանություններ իրենց զինվորական ջոկատներով ու հպատակ ազգաբնակչությամբ հեռանում են բուն հայրենիքից ու Բյուզանդական կայսրությունից, տարածքներ ստանում Կապադովկիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում, ամրացնելով կայսրության հիշատակված շրջանները: Բյուզանդական կայսրության 12 -րդ դ. քաղաքականությունը Այսրկովկասում ավարտվում է լիակատար ձախողմամբ: Բագրատունյաց Հայաստանի տարածքների գրավումը կայսրության կողմից, բացում է տարածաշրջանի դռները արևելքից եկող ասպատակիչների առջև: Այս նույն ժամանակ արևելքից Մերձավոր Արևելք և հայկական լեռնաշխարհ են ներխուժում սելջուկ-թյուրքական հրոսակները: Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) հետո պարզ դարձավ, որ Բյուզանդական կայսրությունը կորցնում է Անատոլիան, իսկ Սելջուկյան Մեծ սուլթանությունն իր սահմանները տարածելով Իրանի, Միջագետքի ու Հյուսիսային Ասորիքի վրա, հաստատվում է Փոքր Ասիայում: Խախտվում է Հայաստանի կառավարման ներքին համակարգը, դեֆորմացիայի են ենթարկվում մշակութային մի շարք կարևոր ստերիոտիպեր, որոնք կապված էին Հայաստան աշխարհի մշակութային ու տարածքային ամբողջականության և եկեղեցական նվիրապետության ընկալման խնդիրների հետ: Միաժամանակ, Մեծ Հայքի կենտրոնական (Անի, Կարս) և հարավային շրջանների (Վասպուրական, Տարոն, Աղձնիք) բնակչության մասայական գաղթեցումների և սելջուկյան տիրապետության հաստատման հետևանքով, այս տարածքներում նկատվում է մշակութային գործունեության որոշակի նվազում: Հայոց պետականության վերականգնումը Բուն Հայաստանում դառնում է անհնար:

Փորձելով դիմագրավել սելջուկյան հրոսակներին, 11–12–րդ դարերում Բյուզանդական կայսրությունը արևելքում վերադասավորում էր ուժերը, օգնություն ստանալու խնդրանքով ծեծում էր Արևմուտքի պետությունների և Հռոմի պապության դռները: Խա-

չակրաց ռազմարշավները նորովի վերադասավորեցին ուժերը Մերձավոր Արևելքում: Առաջին խաչակրաց բանակները, հասնելով Տավրոսի լեռներին, հանդիպեցին մանր հայկական իշխանությունների, որոնք խաչակիրների մեջ տեսնում էին սելջուկ-թյուրքերի դեմ պատերազմում բնական դաշնակիցներ: Դրանք բյուզանդական ռազմական ուժերի մնացորդներն էին: Ժամանակի տարեգիր Մատթեոս Ուռհայեցին խաչակիրների գալուստը գնահատում է իբրև անհավատների նկատմամբ հին մարգարեության կատարում: Այդ է պատճառը, որ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական իշխանություններն ամեն տեսակի (բարոյական, զինական, նյութական և սննդամթերքի) օգնություն են ցույց տալիս առաջին խաչակրաց բանակներին: Սակայն ոգևորությունը երկար չտևեց: Խաչակիրների առաջնորդներից մեկը՝ Պաղտին Բուլոյնացին խարդավանքով գրավեց Եդեսիան, սպանելով իրեն զրկաբաց ընդունած Թորոս իշխանին: Այս դիպվածը համախմբող նշանակություն ունեցավ Կիլիկիայի հայկական ուժերի համար, որոնք ողջ 12–րդ դարում խուսանավման քաղաքականություն էին վարում Բյուզանդական կայսրության, թյուրք-սելջուկյան և խաչակրաց պետական միավորների միջև: Հիմնականում բյուզանդական կողմնորոշում ունեցող հայկական զինվորական ուժը, 12–րդ դարում ևս շարունակում էր կարևոր դեր կատարել Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում:[1] Հայազգի զորահրամանատարների ջոկատները պատերազմում էին բյուզանդական, վրացական, սելջուկյան և ֆաթիմյան Եգիպտոսի բանակներում, սակայն արյունաքամ էր լինում Մեծ Հայքը և նոսրանում էր հայրենիքը պաշտպանող զինվորական ուժը:

Մանազկերտի ճակատամարտից հետո, երբ Բյուզանդական կայսրությունը լքեց իր ծայր արևելյան զավառները, Փոքր Ասիան զիջելով սելջուկ նվաճողներին, տարածաշրջանում բյուզանդական զինվորական ծառայության մեջ գտնվող հայկական զինախմբերը միավորելու առաջին փորձը կատարեց Ռոմանոս Դիոգենես (1068-1071) կայսեր զորահրամանատար Փիլարտոս Վարաժնունին, Կապադովկիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հայտնված զինված ուժերի համախմբմամբ ստեղծելով քաղաքական միավորում: Սակայն այդ պետությունը երկար կյանք չունեցավ և նրա մահից հետո (1086), սելջուկյան ասպատակությունների ու հեղհեղուկ քաղաքական վիճակի պատճառով

մասնատվեց:[2] Այդ տերության տարածքների վրա և հարևանությամբ, տեղ-տեղ իրենց գոյությունը շարունակեցին Քեսունի (Գող Վասիլ), Եդեսիայի (Թորոս), Տարոնի (Չորսվանել) և այլ իշխանություններ, իսկ Կիլիկիայում հիմնավորվեցին Նաթանայելյանների, Բազունիների, Օշինյանների և Ռուբինյանների իշխանական տները, որոնք տարածաշրջանից Բյուզանդական զորքերի հեռանալուց հետո ստեղծված վակուումում ինքնուրույն քաղաքական միավորներ ստեղծելու հավակնություններ ունեին:[3] Նրանց միջև ծավալված գրեթե հարյուրամյա պայքարում հաղթանակով դուրս եկավ Ռուբինյան հայկական իշխանական տունը, որին էլ վերապահված էր Կիլիկիայում հայկական պետականության վերականգնումը (1198 թ.):

Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականության հետևանքով, 11–րդ դարի սկզբում Կապադովկիայում, ապա՝ Հյուսիսային Ասորիքում հայտնվեց նաև Հայոց կաթողիկոսարանը, իսկ Բուն Հայաստանի քաղաքական կառավարման կենտրոնները, կորցնելով իրենց նշանակությունը, տեղափոխվեցին երկրի ծայրամասերը. Լոռէ (Հյուսիսային Հայաստանի Գուգարք նահանգ),[4] Սյունիք[5] և Արցախ,[6] հետզհետե վերաճելով տեղական նշանակության իշխանությունների, որոնք գրեթե առանց դիմադրության հպատակվեցին Սելջուկյան Մեծ սուլթանությանը, իսկ հետագայում՝ Վրաստանին և կամ Ատրպատականի Ելդիգուզյան աթաբեկությանը: Սեծ Հայքում պատմական իրադարձությունները նպաստավոր չէին պետության վերականգնման համար: Այնուամենայնիվ, Հայոց մշակույթը շարունակում էր դեռեւս ամուր պահպանել Բյուզանդիայի և քրիստոնյա աշխարհի հետ կապող մշակութային երակներում: Այս հանգամանքը չէր կարող երկփեղկում չառաջացնել Հայոց մշակույթում, հատկապես քաղաքականության, կենցաղի, մատենագրության և արվեստի բնագավառներում:[7] Այսուհետև քաղաքական և մշակութային երկատվածությունը հետզհետե հզորանալու էր, քանի որ առաջանում էին հայկական պետականության վերականգնման մի քանի պոտենցիալ կենտրոններ: Ռազմաքաղաքական այդ միավորումների կողքին հաստատվեց նաև հայ հոգևորականության մի հոծ զանգված, որն ընդարձակեց հայոց եկեղեցական նվիրապետության սահմանները, նոր եկեղեցական թեմեր և մենաստաններ հաստատելով Կիլիկիայում, Հյուսիսային

Ասորիքում, Պաղեստինում, Եգիպտոսում, Իտալիայում և Բալկաններում:

Նախկին բագրատունյաց Հայաստանի կենտրոնական գավառներում մնացած հայկական ավագանին, որին դեռևս ղեկավարում էր տեղում մնացած Պահլավունիների ճյուղը, չնայած հետզհետե թուլանում էր, սակայն շարունակում էր ժառանգաբար պահել հսկայական ավատական տարածքներ, զինական ուժ և Անիի եպիսկոպոսական աթոռը:[8] Այս ընտանիքն իր ճյուղերը տարածեց ողջ մերձավորարևելյան տարածաշրջանում, Անիից մինչև Հյուսիսային Ասորիք և անգամ Եգիպտոս, խնամիական կապեր հաստատելով հայկական մյուս ազնվականական ընտանիքների հետ: Գրիգոր Մագիստրոս Պահլավունու սերունդները գրեթե մեկ ու կես հարյուրամյակ (մինչև 13–րդ դարի սկիզբը), իրենց ձեռքում պահեցին նաև Հայոց կաթողիկոսական իշխանությունը Կիլիկիայում, ուր տարեցտարի ավելի ու ավելի էր կատարելագործվում եկեղեցական նվիրապետության կառուցվածքը: Արդեն Բարսեղ Ա կաթողիկոսի եռանդուն գործունեության շնորհիվ (1105-1113)[9], քայլեր են ձեռնարկվում հաղթահարելու Հայաստանի քաղաքական և հոգևոր մասնատվածությունը, հակադրելով եկեղեցական նվիրապետության ամբողջականությունը: Բարսեղ Ա-ն, դեռևս 11–րդ դարի վերջին Մելիք Շահից ստացած հրովարտակով միավորեց Հայոց եկեղեցուց անջատված ինքնավարություն ձեռք բերած թեմերը, իրեն ենթարկեց տարածաշրջանի տարբեր քաղաքական միավորների տարածքներում առաջացած, մի շարք հակաթոռ կաթողիկոսարաններ: Դավանական ազատության և հարկային արտոնությունների շնորհիվ, կաթողիկոսարանի գործունեությունը ընդարձակվեց սելջուկյան կայսրության սահմաններում: Կաթողիկոսարանը ելնելով միջազգային քաղաքական տեղաշարժերից և հայ ժողովրդի կյանքում իր դերի նորովի ընկալումից, ձեռնամուխ եղավ նոր եկեղեցա-քաղաքական գծի մշակմանը: 11–12–րդ դդ. ընթացքում Հայոց կաթողիկոսը սկսվում է ընկալվել իբրև ողջ հայ ազգաբնակչության հոգևոր առաջնորդ, որը վեր էր կանգնած ժողովրդի բախտը տնօրինող քաղաքական իշխանություններից: Այս տենդենցն արտահայտվում է նաև Հայոց կաթողիկոսների տիտղոսաշարում: 11–րդ դ. հետո, Հայոց կաթողիկոսների տիտղոսից աննկատելիորեն դուրս է մղվում «Մեծաց» ցուցիչը,[10] որի փոխարեն շրջանառության մեջ է դրվում «Ամե-

նայն» հասկացությունը: «Ամենայն Հայոց կաթողիկոս» բանաձևն արդեն օգտագործվում է 12–րդ դարի Հայոց պատմագրության մեջ, 60-70-ական թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերում, պատմական երկերում և այլուր:[11]

Բյուզանդական կայսրությունը թեպետ արդեն 11–րդ դարի երկրորդ կեսին գրեթե ողջ Փոքր Ասիան զիջել էր սելջուկներին, այնուամենայնիվ դեռևս շարունակում էր հույսեր փայփայել, որ կվերադարձնի միջազգային տնտեսության և քաղաքականության համար կարևոր ստրատեգիական նշանակետեր հանդիսացող Փոքր Ասիան, Կիլիկիան և Հյուսիսային Ասորիքը, ուր Բյուզանդական կայսրերը սելջուկյան ռազմարշավների նախօրեին բնակեցրել էին Հայաստանից գաղթեցրած նախարարական տների ներկայացուցիչներին՝ իրենց զորաջոկատներով: Այդ իսկ պատճառով, Բյուզանդական կայսրությունը տարածաշրջանի հայկական բնակչությանը հպատակեցնելու քաղաքականություն էր վարում: Այդ նպատակին հասնելու համար կայսրությունը հեռավոր ռազմարշավներ էր կազմակերպում դեպի Հյուսիսային Ասորիք և Կիլիկիա (1136-38, 1142-43, 1158-59 թթ.), բյուզանդամետ ուժերի օգնությամբ երկպառակտչական պատերազմներ էր հրահրում տարածաշրջանում,[12] իսկ երկարատև բանակցություններում (1165-1178) ստիպում էր հայոց կաթողիկոսարանին, ընդունելով բյուզանդական եկեղեցու դավանաբանական-ծիսական պայմանները, ճանաչել Կոստանդնուպոլսի պատրիարքության գերագահությունը:[13] Այդ բանակցությունների վերաբերյալ մեզ հասած վավերագրերը ցույց են տալիս, որ Հայոց եկեղեցին առանց առճակատման, խուսանավման ճանապարհով, վարձել է պահպանել իր ինքնանկախ վիճակը, նույնիսկ մշակել է Հայոց կաթողիկոսարանը Անտիոքի պատրիարքական աթոռի կարգավիճակին բարձրացնելու ծրագրեր:[14] Նման առաջարկությունը բյուզանդացիներին 12–րդ դարի 70-ական թվականներին, խոսում է այն մասին, թե Հայոց եկեղեցին որքան ուշադիր էր տարածաշրջանում տեղի ունեցող վավոխությունների և Մերձավոր Արևելքում հույն և լատին եկեղեցիների հակամարտության նյութ դարձած հիմնական խնդիրների նկատմամբ:

12–րդ դարում նկատելի է, որ տարածաշրջանի հիմնական հոգևոր կենտրոններում հեռավոր ժամանակներում հաստատված

բյուզանդական եկեղեցին, հետզհետե գիջում է իր դիրքերը: Թեև Անտիոքի աթոռին ենթակա [illegible] շատ թեմերի վրա շարունակաբար հաստատվում էին օրթոդոքս [illegible] ենթակա եպիսկոպոսներ, սակայն Հյուսիսային Ասորիքի մի շարք կանտոններում թափուր էին մնում եպիսկոպոսական աթոռները: Նույն ժամանակ, կաթոլիկ եկեղեցին ծրագրված ձևով ստեղծում էր սեփական նվիրապետական կառույցը: Օրթոդոքս եպիսկոպոսների կողքին Կիլիկիայում (Տարսոն և Մամեսսիա) և Մերձեփրատյան քաղաքներում (Եդեսիա, Տլուք, Մարաշ, Քեսուն) հաստատվեցին կաթոլիկ եպիսկոպոսություններ: Բյուզանդական եկեղեցու աթոռների կողքին կաթոլիկ եկեղեցու նվիրապետությանն այս ցանցի առաջացմանն անուղղակիորեն նպաստում էին տարածաշրջանում հաստատված հայկական իշխանությունները, հայկական և հակոբիկ եկեղեցիները, որոնք դարեր շարունակ ընդդիմացել էին բյուզանդական եկեղեցու նվաճողական ձգտումներին: Կաթոլիկ եկեղեցին դեռևս իր առջև նպատակ չէր դրել դուրս մղել քրիստոնեական մյուս քույր եկեղեցիները և բարեկամական փոխհարաբերություններ էր մշակում տարածաշրջանի մյուս եկեղեցական համայնքների հետ:[15] Պահպանված վավերագրերը խոսում են այն մասին, որ Հռոմի պապությունը Արևելքի հետ փոխհարաբերությունների այդ փուլում դեռևս ճանաչում է Հայոց եկեղեցու ուղղափառությունը և Արևելքը (Կովկաս, Ասորիք, Մեդիա) համարում է նրա նվիրապետության համակարգում:[16] Լատին Արևելքի հետ փոխհարաբերությունների բնույթը հետզհետե փոխվում է միայն 1198 թ. հետո, երբ Կիլիկյան թագավորության ճանաչման, իսկ հետագայում ռազմական օգնության փոխարեն Հռոմը սկսում է պահանջել և դավանական և ծիսական զիջումներ:

Հայոց կաթողիկոսարանը, այս պատմաշրջանում, հայ ժողովրդին միավորող միակ իրավական իշխանությունն էր. պետություն, պետականությունը կորցրած ժողովրդի համար: Կաթողիկոսարանը վեր էր Կիլիկիայում և այլուր իշխանության հասած բոլոր հայկական իշխանական տներից և երբեմն ստանձնում էր միջնորդ դատավորի դեր միմյանց դեմ կռվող իշխանների միջև բորբոքված երկպառակտչական պատերազմները դադարեցնելու ժամանակ: Հռոմկլայի իշխան Հայոց կաթողիկոսը գերագահ դիրք ուներ բոլոր հայ իշանությունների նկատմամբ: Այս կարգավիճակը թույլ էր տալիս նրան հանդես գալ ողջ ժողովրդի անունից, միա-

վորել հայկական իշխանությունների ուժերը՝ իրագործելու համար պետականությունը կորցրած ժողովրդի քաղաքական ձգտումները: Կաթողիկոսարանը քրիստոնյա և մահմեդական պետությունների հետ բանակցություններում օգտագործում էր բոլոր հնարավորությունները իր առջև դրված եկեղեցական և քաղաքական խնդիրները լուծելու համար, որի հեռավոր նպատակն էր պետականության վերականգնումը:[17]

Մերձավոր Արևելքի պատմության այս շրջանը անմիջապես հաջորդում է Մեծ սելջուկների պետության փլուզմանը: Մա մի դարաշրջան էր, երբ Բյուզանդիայի կողմից հայկական գավառների բնակչության տեղափոխություններից հետո, Հայաստանի կենտրոնական շրջաններում և հայերով բնակեցված մի շարք տարածքներում, ստեղծվում են սելջուկյան կայսրության հիմքի վրա առաջացած քաղաքական միավորներ, ինչպիսիք էին Ատրպատականի Ելդիգուզյան աթաբեկությունը, Դվին-Անիի Շեդադյան,[18] Կարինի Սալդուխյան, Խլաթի Շահի-Արմենների, Ծոփքի Արաուքյան և Կապադովկիայի Դանիշմանյան ամիրայություններ,[19] Իկոնիայի սուլթանությունը: Վերջինս, որ տեր էր դարձել գրեթե ողջ Փոքր Ասիային, արդեն 12–րդ դարի երկրորդ կեսին հավակնում էր նշված բոլոր քաղաքական միավորների գերական դառնալ: Չնայած 12–րդ դարի վերջին նրա ժամանակավոր թուլացմանը, այն կարողացավ 13–րդ դարի առաջին տասնամյակներին այնքան հզորանալ, որ ստիպեց Կիլիկիայի հայկական թագավորությանը ընդունել իր գերակայությունը և անգամ հատել համատեղ դրամ: Միայն մոնղոլների գալուստը Կիլիկյան թագավորներին «ազատեց» այս կախվածությունից և գրեթե կես հարյուրամյակ Հայոց պետությունը ճանաչեց մոնղոլների գերագահությունը:

Մյուս կողմից, այս դարաշրջանը Վրաց թագավորության աննախընթաց վերելքի դարաշրջանն էր: Այսրկովկասի երկու (հայ և վրացի) քրիստոնյա մեծ ժողովուրդները ձեռք-ձեռքի տված, օգտվելով Մեծ Սելջուկների տերության մասնատումից, վրացական պետության գլխավորությամբ, 12–րդ դ. վերջին և 13–րդ դ. սկզբին ետ էին գրավում նրանց իշխանության տակ անցած հայկական գավառները, իսկ ռազմարշավները հասան մինչև Կաբին: Այս երևույթն իր տեսակի մեջ հիշեցնում է Եվրոպայում սկիզբ առած խաչակրաց շարժումը: Պայմանականորեն այն կա-

ռելի է անվանել «Կովկասյան ռեկոնկիստա», որի հիմնական ներշնչող-դերասկատարներն էին վրաց թագավորության զինվորական պաշտոնյաներ, հայազգի Զաքարե և Իվանե եղբայրները, որոնցից մեկը պահպանել էր Հայոց դավանանքը, իսկ մյուսը՝ ընդունելով քաղկեդոնականություն (ըստ հայկական սկզբնաղբյուրների), դարձել էր «վրացի», այսինքն՝ վրացադավան: Պատմական իրադարձությունների բերումով այս շարժումը չհասավ իր տրամաբանական ավարտին՝ քրիստոնյա Հայաստանի բոլոր տարածքների վերագրավմանը, քանի որ ներքին ճգնաժամը հյուծեց նաև Վրաց թագավորությունը, որն իր գոյությունը հետագայում կշարունակի իբրև տարածաշրջանի հզոր տերություններին ենթակա մի կախյալ երկիր: Մոնղոլական ռազմարշավը 13–րդ դարի առաջին կեսին ամբողջովին կազմալուծեց Բուն Հայաստանի ներքին ինքնավարությունը և փոշիացրեց տեղական իշխանական տների հզորությունը: Մեծ Հայքում պետականությունը վերականգնելու Զաքարյան իշխանների նկրտումները իրականում չիրագործվեցին: Հատկանշական է, որ Զաքարյանները համընդհանուր ազգային կարևորություն ունեցող խնդիրների լուծման համար դիմում էին Կիլիկիայում հաստատված Հայոց պետությանը և Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանին:[20] Այդ իմաստով, ողջ հայկական էյկումենեյում Ռուբինյանների հիմնադրած Կիլիկիայի հայկական պետությունը, հատկապես 12–13–րդ դդ. ձեռք բերեց համահայկական նշանակություն:

AZAT BOZOYAN

THE HISTORICAL INCENTIVES OF THE POLITICAL REVIVAL IN ARMENIAN CILICIA

The XII century has a particular importance for the history of Armenian State system. It is characterized by the extension of the territories populated with Armenians, by the creation of new Armenian political and cultural centers outside the Great Armenia, by the appearance of new political unites in Cilicia, which took the leaders role all overate Armenian oecumene. It is an important period, when irreversible changes take place in the interior and the exterior life of Armenia, in the national consciousness,in the structure of political and ecclesiastical organizations. Armenian localities, as well as unique spiritual and cultural centers, sprung up in a new geographical milieu (North Syria, Cilicia, Egypt, Palestine, Balkan Peninsula). These changes resulted in bringing the main military forces out of the political centers

of Armenia, which, in its turn, was the result of the occupation, by the Byzantine Empire, of Great Armenia's territories, as well as the fall of Bagratides' Kingdom.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայկական իշխանությունների բյուզանդամետ դիրքորոշման մասին խոսում են ժամանակի բոլոր հայ պատմագիրները:
2. Այդ պետության անկման պատճառներից էր նաև Փիլարտոսի անհավասարակշիռ կրոնական քաղաքականությունը: Իր իշխանությունը պահպանելու նպատակով նա պատրաստ էր նույնիսկ օրթոդոքսությունից անցնել մուսուլմանության: Գաղտնիք չէ նաև այն, որ նա ամեն գնով փորձում էր Հայոց կաթողիկոսական գահը տեղափոխել սեփական տարածք, փորձելով հայ ազգաբնակչության աչքում լեգիտիմ դարձնել իր իշխանությունը: Այս փաստը նշանակում է, որ որքան էլ Փիլարտոսը և նրա աջակիցները հարեին բյուզանդական եկեղեցուն, միևնույն է, պետք է հաշվի նստեին Հայոց եկեղեցու հետ սերտորեն կապված, և փասորեն նրա հոտի մասը կազմող հասարակ բնակչության հետ:
3. Այդ հավակնությունները տարեցտարի խորանում էին, ազգային մտածողության մեջ հետզհետե կրկին ձևավորվում էր ազգային պետականության վերականգնման գաղափարը, որն ավելի շոշափելի երանգներ էր ստանում հայկական էյկումենեի հարավում, ուր 11–րդ դարի վերջում Կիլիկիայում ստեղծված անկլավում, որի վրա հավակնություններ ունեին Բյուզանդական կայսրությունը, Իկոնիայի, Դանիշմանյան ու Հալեպի սելջուկ պետությունները և Անտիոքի լատին դքսությունը: Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը հետևողական քայլեր կատարեց և արդեն 12–րդ դարի վերջին (1198 թ.) պաշտոնապես ճանաչվեց շրջակա գեր-տերությունների կողմից իբրև Հայոց Մեծաց թագավոր (տե՛ս Կիլիկիայի պետության կտրած դրամների արձանագրությունները):
4. Լոռու Կյուրիկյան հարստությունը իր գոյությունը շարունակեց մինչև 12–րդ դարի կեսերը և իր գոյությունը հյուսիսից Վրաց պետության քաղաքական ճնշման հետևանքով դադարեցնելով: Այս տիրույթները Վրաց թագավորության կազմում 12–րդ դարի վերջին անցան Զաքարյանների տնօրինության տակ:
5. Սյունիքի թագավորությունը գոյատևեց մինչև 12–րդ դարի կեսերը, հետզհետե մտավ Ատրպատականի Էլդիգուզյան աթաբեկության կազմի մեջ, կորցնելով պետականությունը: Չափազանց հետաքրքիր էր այս երկրամասի աշխարհաքաղաքական դիրքը, որի մասին Հայկական և արևելյան սկզբնաղբյուրները վկայում են, որ այս թագավորության տարածքն էին իրենց զորքերի ձմեռոցը և հավաքատեղին դարձրել և՛ սելջուկ թյուրքերը և հետագայում՝ թաթար մոնղոլները:
6. Արցախի մելիքական տները երկար ժամանակ կարողանում էին պահպանել իրենց կիսանկախ վիճակը Վրաստանի և Ատրպատականի Եղդիկուզյան աթաբեկության միջև: Կյուրիկյան թագավորության գոյատևման ողջ ընթացքում Արցախի մասնատված իշխանությունները ճանաչում էին

Կյուրիկյանների գերագահությունը: Ի տարբերություն մյուս կենտրոնների, այս տարածքում էր գտնվում Աղվանից աթոռիկոսարանը, որը գոյության իրավական հիմք էր ստեղծում տարածքի հայկական իշխանությունների համար: Լոռիի Կյուրիկյանները ևս իրենց իշխանությունը սրբագործում էին Աղվանից կաթողիկոսների իշխանությամբ:

7. Երկփեղկումը դարեր շարունակ սպառնացել է Հայոց պետականությանը: Դրա քաղաքական արտահայտություններ են եղել Հայաստանի բազմաթիվ բաժանումները Հռոմեական և Բյուզանդական կայսրությունների, Պարսկաստանի ու Արաբական խալիֆաթի միջև: Հոգևոր երկփեղկումը նկատելի՝ դարձավ Հայոց եկեղեցում քաղկեդոնական և հակաքաղկեդոնական եկեղեցական կուսակցությունների պայքարով, որը ժամանակ առ ժամանակ հրահրում էր Բյուզանդական պետությունն ու եկեղեցին: 13–րդ դարից հոգևոր երկփեղկումով էր սպառնում ունիթորների և հակաունիթորներին, որը 14–րդ դարից հետո ձևափոխվեց հայ-կաթոլիկների և Հայոց ազգային եկեղեցու պաշտպանների բախման, որն իր գագաթնակետին հասավ ԺԹ դարի ընթացքում:
8. Կաթողիկոսական իշխանությունը Անիում վերահաստատելու ծրագիրը դեռևս առկա էր 12–րդ դարի երկրորդ կեսերին: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Սամուել Անեցին: Կաթողիկոսական աթոռը Անիում տեսնելու մի հոսահաս ճիգ էր 12–րդ դարի վերջին, Անիի եպիսկոպոս Բարսեղին կաթողիկոս դարձնելու անհաջող փորձը: Այնուամենայնիվ, 12–րդ դարի վերջի մի շարք վիմագիր արձանագրություններում Բարսեղն անվանվում է Հայոց կաթողիկոս:
9. Ըստ Ուռհայեցու, չափազանց ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Անիի Բարսեղ եպիսկոպոսին ու Գրիգոր Վկայասերի օրհնությամբ կաթողիկոս են օծում Լոռու թագավոր Կյուրիկեն և Աղվանից Յովհաննես Կաթողիկոսը: Եվ միայն դրանից հետո է, որ Գրիգոր Վկայասերը գալիս է Անի ու հավանաբար անձամբ հանձնում կաթողիկոսական իշխանության նշանները: Ուռհայեցու այս դրվագում ակնհայտ է կաթողիկոսական աթոռի Անի տեղափոխության միտումը, որի մասին խոսում է նաև Սամուել Անեցին:
10. Մինչև 12–րդ դարը Հայոց մատենագրությանը հայտնի է միայն կաթողիկոսի «Ամենայն Հայոց» տիտղոսը:
11. Տե՛ս Ա.Բոզոյան, «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը», Երևան 2000, էջ 84:
12. Իր իշխանությունը վերհաստատելու և Ռուբինյան իշխանությունը թուլացնելու համար Բյուզանդական կայսրությունը նույնիսկ խրախուսում էր փոքրասիական սելջուկների ասպատակությունները:
13. Բյուզանդական կայսրության և եկեղեցու ճնշումը Հայոց եկեղեցուն բնական դաշնակից էր դարձնում Հռոմի պապության հետ: Դրա ամենավառ օրինակն է Ինոկենտիոս Բ պապի նամակագրությունը Հայոց կաթողիկոսի հետ, որը համընկնում է Հովհաննես Կոմնենոսի կողմից Կիլիկիայի գրավման ժամանակաշրջանի հետ (12–րդ դարի 30-ական թթ.):

14. Ա.Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Եր., 1988, Ա.Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերերը (116--1178), Եր., 1995:
15. Այդ քաղաքականությունը ավելի ակնդետ է 1136-38 թթ. և դրանից հետո, երբ Հովհաննես Կոմնենոս բյուզանդական կայսրը նվաճեց Կիլիկիան և իրեն հպատակեցրեց Անտիոքի խաչակրաց իշխանությունը:
16. Wilhelm Tyrensis, Chronicon, Bd. LXIIIA, 15, 18, s. 699, Z.15.
17. Ա.Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և կիլիկյան Հայաստանը, Եր., 1988, էջ 224:
18. Հիշատակված երկու քաղաքական միավորները գոյություն ունեին նախքան սելջուկյան ռազմարշավները: Թվարկվածների մեջ Շեղաղյանները հավանաբար ունեին քրդական ծագում:
19. Այս հարստությունների տիրակալները հաճախ փորձում էին խնամիական կապերի միջոցով մերձենալ հայկական ազնվականության հետ, ճգնելով իրենց իշխանությունը կապել տեղական պետական ավանդույթների հետ: Օրինակ Դանիշմանյաններին բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատեսը համարում է ազգությամբ պարսկահայ (περσαρμενιοι), իսկ նրանց տոհմը բխեցնում է Արշակունիների տոհմից: Մատթեոս Ուռհայեցին ևս ընդգծում է այս տոհմի հայկական ծագումը: Այս տեսանկյունից հատկանշական է նաև Շահի-Արմենների պետության պաշտոնական անունը:
20. Հատկանշական է, որ Զաքարյաններն իրենց փառքի գագաթնակետին (13–րդ դ. սկիզբ) ևս ընդունում էին Կիլիկիայի հայկական պետության համազգային նշանակությունը և նրանց էին դիմում որոշ համազգային խնդիրների լուծման համար: Նման հարցերի մեջ հիշատակելի է եկեղեցական շարժական սեղանի խնդիրը, որի մասին պատմում է 13–րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին: